# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2022 թվականի N 1948 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1443-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1443-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածով նախատեսված ցանկը 25-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25.1-25.3-րդ կետերով.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 25.1. | 7309005900 | Պահամաններ | Պահամաններ, տարաներ և համանման տարաներ ցանկացած նյութի համար (բացի սեղմված կամ հեղուկ գազից), 300 լիտրից ավելի տարողությամբ, ոչ ավելի 100 000 լիտր | կգ | 50 000 | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | 200 000 000 | |
| 25.2. | 6909900000 | Կարասներ | Արտադրության մեջ օգտագործվող կավե և կերամիկական տարաներ, որոնք օգտագործվում են ապրանքների պահպանման համար | կգ | 50 000 | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | 60 000 000 | |
| 25.3. | 8427201909 | Ամբարձիչ | Ինքնագնաց ամբարձիչներ 1 մ կամ ավելի բարձրությամբ | հատ | 5 | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | 60 000 000 | |

».

2) հավելվածով նախատեսված ցանկը 102-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 103-րդ կետով.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 103. | 3914000000 | Իոնափոխանակ-ման խեժեր նախատեսված կոնյակի ֆիլտրման համար | Պոլիմերներից ստացված իոնափոխանակման խեժեր՝ առաջնային ձևերով | կգ | 20 000 | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | ԵՄ, Չինաստան, Վրաստան, ԱՄԷ | 20 000 000 | |

».

3) հավելվածով նախատեսված ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «6 875 697 110» թիվը փոխարինել «8 740 088 776» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ